ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի դելեգացիան, որն այցելել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նախագահին, հաղորդում է.

«ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նախագահ պարոն Պադիլլո Ներվոն այսօր ժամը 16-ին ընդունեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի դելեգացիային, որի կազմումն են Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահ Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրին, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի փոխ-նախագահներ Էժենի Կոտտոնը և Պյեռոն Նեննին ու Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի անդամներ Իպաբելլա Բլյումը, պրոֆեսոր Անդրե Բոնոնարը, Պյեր Կոտը և Իվ Ֆարժը։

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի դելեգացիան պարոն Պադիլլո Ներվոյին հանձնեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի սեսիայում ընդունված բանաձևերը և, մասնավորապես, միաժամանակյա ու վերահսկվող զինաթափման վերաբերյալ բանաձևը։

Պարոն Պադիլլո Ներվոն հետաքրքրություն արտահայտեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի միջոցառումների նկատմամբ։

Հանդիպումը ամենայն ակներևությամբ ցույց տվեց այն նշանակալից դերը, որ խաղում է հասարակական կարծիքը միջազգային պրոբլեմների քննարկման մեջ։

Փարիզ, 30 հունվարի, 1952 թվականին»։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԵՎ ՍՍՌՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ԳՐՈՂ Վ. ՀՅՈՒԳՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի սեսիայի որոշմամբ, սույն թվականի փետրվարի 26-ին բոլոր երկրներում կնշվի ֆրանսիական մեծ գրող Վիկտոր Հյուգոյի ծննդյան 150-ամյակը։ Այդ կուլտուրական լայն միջոցառումը, նույնպիսի ուրիշ միջոցառումների շարքում, նպատակ է դնում ժողովուրդների միջև կուլտուրական կապի հետագա զարգացումը հօգուտ ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման շահերի։

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն և Սովետական գրողների միությունը կազմեցին Վիկտոր Հյուգոյի ծննդյան 150-ամյա տարեդարձը ՍՍՌՄ-ում անցկացնող Համամիութենական կոմիտե։

Համամիութենական կոմիտեի կազմի մեջ մտան. Ա. Ա. Ֆադեևը, ՍՍՌՄ Սովետական գրողների միության գլխավոր քարտուղարը (կոմիտեի նախագահ), Ի. Գ. Էրենբուրգը (կոմիտեի նախագահի տեղակալ), Մ. Ա. Շոլոխովը՝ գրող, Կ. Մ. Սիմոնովը՝ «Վիտե-

բատուրնայա գազետա»-ի գլխավոր խմբագիր, Միկոլա Բաժանը՝ գրող (Ուկրաինական ՍՍՌ), Է. Ցա. Սմիլգիսը՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստ (Լատվիական ՍՍՌ), Ի. Ի. Անիսիմովը՝ պրոֆեսոր, Ի. Ա. Կաիրովը՝ ՌՍՖՍՌ Մանկավարժական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, Ա. Ս. Իսահակյանը՝ բանաստեղծ (Հայկական ՍՍՌ), Ա. Ա. Յաբլոչկինան՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի, Վ. Ի. Պուդովկինը՝ կինոռեժիսոր, Ա. Ա. Խորավան՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստ (Վրացական ՍՍՌ), Տ. Լ. Շչեպկինա-Կուպերնիկը՝ ՌՍՖՍՌ արվեստի վաստակավոր գործիչ։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵՆ

Խաղաղության կողմնակիցների ամերիկյան կոնտինենտալ կոնգրեսի նախապատրաստման ամերիկյան նախաձեռնող կոմիտեի բյուլետենում հրապարակվել է մի կոմյունիկե, որն ստացվել է կոնգրեսի՝ Ռիո-դե-Ժանեյրոյում գտնվող նախաձեռնող հանձնաժողովից։ Կոմյունիկեում ասվում է, որ կոնգրեսը տեղի է ունենալու մարտի 11-ից մինչև 16-ը, թեև դեռևս չի որոշվել, թե ամերիկյան ո՛ր երկրում, նկատի առնելով, որ այն արգելվեց Բրազիլիայում։ Նշվում է, որ խաղաղության կողմնակիցների կոնտինենտալ կոնգրես հրավիրելու շարժումը զարգացել է որպես խաղաղության նկատմամբ ամերիկյան ժողովուրդների խորին ձգտման արտահայտություն՝ ընդդեմ նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքի։ Կոնգրեսի նպատակները նրանց չեն կապում որևէ քաղաքական պարտիայի կամ կրոնի հետ, և կոնգրեսը «ենթարկված չի լինելու որևէ որոշակի երկրի, կառավարության կամ սոցիալական խմբի»։

Մենք վստահ ենք, ասվում է կոմյունիկեում, որ խաղաղության կողմնակիցների կոնտինենտալ կոնգրեսը կարող է տեղի ունենալ նշված ժամկետին ամերիկյան մայրցամաքի երկրների խոշոր քաղաքներից մեկում։